Հայկական Ժամանակ
#118 (1366), շաբաթ, հունիս 25, 2005թ.

ԱԶԳԱՅԻՆ ՄԻՏՔ

ԱԿԱԴԵՄԻԱՅԻՆ ՀԱՐԿԱՎՈՐ Է ՆՈՐ ՆԱԽԱԳԱՀ

ինչպես նաեւ էական կառուցվածքային բարեփոխումներ

Արդեն 12 տարի է, որ ՀԳԱԱ-ն, իր նախագահի եւ նրա կողմից նշանակված նախագահությունների ղեկավարությամբ «վերափոխումներ» կատարելով, գնում է դեպի անխուսափելի անկում: Այն կանգնեցնելու համար անհրաժեշտ է հրաժարվել պահպանողական մտածելաձեւից եւ կատարել ժամանակի պահանջներին համապատասխանող իրական վերափոխումներ:

Հայաստանի Ակադեմիան բաղկացած է երկու՝ իրար հետ ուղղակիորեն չկապված մասերից: Մեկը՝ ակադեմիկոսների եւ թղթակից անդամների հանրությունն է, որի ներկայացուցիչները աշխատում են տարբեր հիմնարկներում (նույնիսկ ոչ ակադեմիական), իսկ մյուսը՝ Ակադեմիայի կազմում գտնվող ինստիտուտներն են եւ, հետեւաբար, նրանց աշխատակիցները: Գիտնականների այսպիսի միացումը Ակադեմիայի շրջանակներում խորհրդային ժամանակներում արդարացված էր նրանով, որ նրանց վրա դրված խնդիրները մեծամասշտաբ էին (համապատասխանում էին Խորհրդային Միության խնդիրներին), եւ նրանք ֆինանսավորվում էին մեկ կենտրոնից՝ Մոսկվայից: Այս միավորումը անհրաժեշտ էր, որպեսզի կենտրոնը՝ Մոսկվան, վստահեր մեր ինստիտուտներին եւ լիովին ֆինանսավորեր նրանց: Այսպիսի կառուցվածքը արդարացված էր նաեւ նրանով, որ խորհրդային պետության ղեկավարման կառուցվածքը բուրգի էր նման, եւ գիտության ղեկավարումը չէր կարող խուսափել դրանից: Խորհրդային Միության կործանման եւ Հայաստանի անկախության ձեռքբերման հետեւանքով Հայաստանի ակադեմիական գիտությունը զրկվեց իր առաջ դրված խնդիրների մասշտաբայնությունից եւ, որ ավելի կարեւոր է, մեծ պետության կենտրոնական ֆինանսավորումից: Ակադեմիայի հին կառուցվածքը չէր համապատասխանում նոր պայմաններին: Այն էլ ավելի նկատելի դարձավ, երբ ակադեմիական ինստիտուտները սկսեցին ֆինանսավորվել ուղիղ գիտության եւ կրթության նախարարության կողմից: Ստեղծված պայմաններում միակ բարեփոխումը, որը պետք էր կատարել, Ակադեմիայի երկու ֆունկցիաների (փորձագիտության եւ գիտական աշխատանքների կատարման) եւ, հետեւաբար, այդ ֆունկցիաները իրականացնող ակադեմիկոսների եւ թղթակից անդամների հանրության եւ ակադեմիական ինստիտուտների տարանջատումն էր: Իրոք, այնպիսի փոքր երկրում, ինչպիսին Հայաստանն է, ակադեմիկոսների եւ թղթակից անդամների հանրությունը կարող էր նորմալ կատարել փորձագետի իր ֆունկցիան, եթե ակադեմիական ինստիտուտները դուրս գային ակադեմիայի կազմից: Իմ կարծիքով գիտական ինստիտուտը, այդ թվում ակադեմիական, դրսից ղեկավարման կարիք չունի, նա միայն ֆինանսավորման կարիք ունի: Գիտական ինստիտուտի տնօրենը եւ գիտական խորհուրդը բավարար չափով կարող են ղեկավարել նրա նորմալ գործունեությունը: Ակադեմիական ինստիտուտները պետք է անկախ լինեն ակադեմիայի ղեկավարությունից: Նրանք կարող են միանալ իրար՝ կազմելով ակադեմիական ինստիտուտների ասոցիացիա, միանալ բուհերին կամ որպես անկախ միավոր մտնել իրենց ֆինանսավորող նախարարության կազմի մեջ: Այսպիսի կառուցվածքի դեպքում Ակադեմիայի նախագահն ու նախագահությունը, որը միավորում է ակադեմիկոսներին ու թղթակից անդամներին, այլեւս պատասխանատու չի լինի ինստիտուտների ֆինանսավորման համար եւ կկենտրոնացնի իր ուշադրությունը հանրապետությունում փորձագիտության, ամսագրերի հրատարակման, գիտական տեղեկատվության ապահովման, մրցանակաբաշխությունների անցկացման, արտերկրի ակադեմիաների հետ կապերի, գիտության պրոպագանդայի եւ վերջապես ակադեմիայում ակադեմիկոսների եւ թղթակից անդամների ընտրությունների կազմակերպման վրա: Ակադեմիկոսների եւ թղթակից անդամների հանրությունը, իրականացնելով հանրապետության համար կարեւոր այս ֆունկցիաները, կֆինանսավորվեր կառավարության կողմից այդ աշխատանքի համար: Այսօրվա ակադեմիայի այս մասն է, որը կարելի էր անվանել ՀԳԱԱ: Որոշ մարդիկ պնդում են, որ այդպիսի ֆունկցիաներով Ակադեմիան նման է «ակումբի»: Բայց դա այդպես չէ: Նման բան է ասում Ակադեմիայի ղեկավարության այն մասը , որը շահագրգռված է իր ձեռքերում կենտրոնացնելու ինստիտուտների ֆինանսավորման լծակները: Իմ կարծիքով այսպիսի ռեֆորմը կարող է բարձրացնել Ակադեմիայի դերն ու նշանակությունը հանրապետությունում: Այսպիսի բարեփոխում կարող էր կատարվել դեռ տասներկու տարի առաջ, եւ ես, որպես այն ժամանակվա Ակադեմիայի փոխնախագահ, փորձում էի սկսել այդ բարեփոխումները: Բայց 1993 թվին Վ.Համբարձումյանի անժամանակ հրաժարականը (այն ժամանակվա իշխանությունների դրդմամբ) եւ նրա փոխարեն Ակադեմիայի այժմյան նախագահ ակադեմիկոս Ֆ. Սարգսյանի ընտրությունը զրկեցին ինձ այդ ռեֆորմի ուղղությամբ քայլեր կատարելու հնարավորությունից: Ես ստիպված էի հեռանալ Ակադեմիայից, որովհետեւ Ակադեմիայի նոր նախագահը եւ նրա շրջապատը գտնում էին, որ իմ առաջարկը կվերացնի Ակադեմիան: *Ակադեմիա ասելով՝ ես ոչ թե հասկանում եմ ակադեմիական ինստիտուտների համախումբը, այլ՝ ակադեմիկոսների եւ թղթակից անդամների հանրություն:* Սա է իմ եւ իմ ընդդիմախոսների տեսակետների տարբերությունը:

Բարեփոխումների հարցում անհրաժեշտ է հանրապետության իշխանության եւ Ակադեմիայի ղեկավարության համաձայնությունը: Այդ համաձայնությունը միայն կարող է տարրաբաժանել նրանցից յուրաքանչյուրի պարտականությունները: Դեռ 1998 թվին հանրապետության նորընտիր նախագահ Ռ. Քոչարյանը Ակադեմիայի ընդհանուր ժողովում առաջարկեց հանդիպել ակադեմիկոսների հետ եւ խոսել ակադեմիական ռեֆորմի մասին, բայց մինչեւ այժմ, իմ կարծիքով, այդպես էլ լուրջ խոսակցություն տեղի չի ունեցել: Արդյունքում եղավ, իմ կարծիքով, անիմաստ որոշում՝ ըստ որի Ակադեմիայի նախագահությունն է բաշխում կառավարությունից ստացած ֆինանսավորումը: Այսպիսով, տասներկու տարի հետո վերադարձանք ինստիտուտների ֆինանսավորման հին ձեւին, միայն մեկ տարբերությամբ, որ չկա փողի այն հսկա ծավալը, որից կարելի էր օգտվել եւ, փաստորեն, բացակայում է իշխանության կողմից ֆինանսների ծախսման հսկողությունը: Այժմ գիտության ֆինանսավորումը այնքան է փոքրացել, որ մնում է հարց տալ Ակադեմիայի նախագահությանը եւ նրա ղեկավարին՝ արդյո՞ք արժեր այդքան շարշարվել այդ չնչին գումարի բաշխման իրավունքը ձեռք բերելու համար: Հասկանո՞ւմ եք արդյոք, որ դրանով դուք իշխանություններին ազատում եք գիտական ինստիտուտները քաղցած պահելու պատասխանատվությունից: Ո՞րն է նախագահության եւ նրա ղեկավարի շահը, որ իր վրա է վերցնում այդ պատասխանատվությունը: Եվ, վերջապես, այդ դեպքում ո՞վ է հանրապետության գիտական ծրագրերի փորձագետը:

Վերջերս մամուլում քննարկումներ են սկսվել Ակադեմիայի այսօրվա եւ վաղվա օրվա մասին: Քննադատական հոդվածներով հանդես են եկել ակադեմիկոսներ Գ.Գուրզադյանը եւ Ա. Ներսիսյանը: Կուզենայի մի քանի խոսք ասել նրանց կողմից բարձրացրած հարցերի շուրջ: Ես համաձայն եմ ակ. Գ.Գուրզադյանի հետ, որ անթույլատրելի ֆարս էր 1996թ. փետրվարին թղթակից անդամների հաշվին ակադեմիկոսների թիվը միանգամից ավելի քան կրկնապատկելը: Ո՞ւմ էր պետք այդ շտապողականությունը: Իհարկե, ոչ Լեւոն Տեր-Պետրոսյանին, ինչպես կարծում է ակադեմիկոս Գուրզադյանը: Այն Ակադեմիայի նախագահի ցանկությունն էր, որը իրականացվեց այն ժամանակվա կառավարության ղեկավարի աջակցությամբ: Նա նույնիսկ չլսեց Ակադեմիայի պատվավոր նախագահ Վ.Համբարձումյանի կարծիքը, որն այն ժամանակ գրել է. «Ես նորից մտածեցի այս հարցի մասին եւ նորից համոզվեցի, որ մեր Ակադեմիայի համար երկաստիճան ակադեմիկոսությունը (ակադեմիկոսներ եւ թղթակից անդամներ) ամենից նպատակահարմարն է եւ հանրապետությանը ավելի օգտակար», «Այժմ» (1996, փետրվար): Իսկ Ակադեմիայի նշված «վերափոխումը» խիստ բարձրացրեց նրա նախագահի վարկանիշը նոր ակադեմիկոսների շրջապատում, որի լավագույն ապացույցն է այն, որ եթե Ֆ. Սարգսյանը 1993 թվին ընտրվեց Ակադեմիայի նախագահ՝ հավաքելով 50 ձայն 90 քվեարկողներից, ապա վերջին երկու ընտրություններում նրա օգտին տրվել է ձայների ավելի քան 90%-ը: Մի քանի խոսք ՀԳԱԱ նախագահի վերջին ընտրության մասին: Ես համաձայն եմ ակադեմիկոս Ա. Ներսիսյանի հետ, որ այդ ընտրությունը տեղի է ունեցել խախտումներով եւ որ պետք էր այն չեղյալ համարել: Ես միայն ընդհանուր ժողովի ժամանակ եմ իմացել, որ Ակադեմիայի նախագահի ընտրություններ պետք է լինեն: Ընդհանուր ժողովում ես բողոքել եմ այդ հարցի քննարկման կապակցությամբ եւ պահանջել քվեարկության դնել այդ օրը ընտրություններ անց կացնելու նպատակահարմարության հարցը: Նիստը նախագահող ակադեմիկոս Ս.Համբարձումյանը կատարեց իմ պահանջը, եւ այդ օրը Ակադեմիայի նախագահի ընտրություն անցկացնելուն միայն ես դեմ քվեարկեցի (եւ երեք ձեռնպահ): Իմ այսպիսի վարքագիծը պայմանավորված էր նրանով, որ մենք (Ակադեմիայի անդամներս) զրկված էինք նախընտրական արշավ կազմակերպելու հնարավորությունից: Ինչպես երեւաց քվեարկությունից, ժողովին ներկա անդամների գերակշռող մասը գոհ էին Ակադեմիայի նախագահի աշխատանքից եւ Ակադեմիայի այսօրվա վիճակից: Ակադեմիայի նախագահ ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանը Ակադեմիայի նախագահություն աշխատանքի է տեղափոխվել վարչապետի պաշտոնից 1988 թվի երկրաշարժից հետո: Մեկ տարուց նա Ֆիզիկա-տեխնիկական բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարն էր: Իսկ երեք տարի հետո՝ Ակադեմիայի նախագահը: Այդ ժամանակից անցել է 12 տարի, եւ այսօր Ակադեմիայի երկրներում էլ տեղի են ունեցել անշրջելի փոփոխություններ. լրիվ փոխվել է ակադեմիկոսների կազմը, ինստիտուտների գիտական աշխատողների թիվը խիստ նվազել է: Գիտական աշխատողի աշխատավարձը չի գերազանցում 25 հազար դրամը: Սա ցույց է տալիս, որ Ակադեմիան ակնհայտ ճգնաժամի մեջ է: Անհրաժեշտ են անհապաղ վերափոխումներ Ակադեմիան այդ ճգնաժամից դուրս բերելու համար: Ակադեմիային անհրաժեշտ է նոր նախագահ, որը լինելով գործող գիտնական, հասկանալով գիտության պահանջները եւ համագործակցելով իշխանությունների հետ՝ կարգի կբերի Ակադեմիան: Կազատի ակադեմիական ինստիտուտները նախագահության «ղեկավարումից», կպահանջի կառավարությունից գիտական աշխատողների համար նրանց արժանավայել աշխատավարձ եւ աշխատանքային պայմաններ: Իսկ ակադեմիկոսների եւ թղթակից անդամների հանրությունը ջանքերը կուղղի հանրապետությունում գիտական փորձագիտությունը բարձր մակարդակով անցկացնելու գործին:



ԴԱՎԻԹ ՍԵՂՐԱԿՅԱՆ
ՀԱԱ ակադեմիկոս

ՍԻՐԵԼԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ

Դիմում ենք Ձեզ օգնելու մեր կարիքավոր հայրենակիցներին, եթե տանը ունեք ձեզ համար ոչ պիտանի հագուստ, կոշիկ, կենցաղային իրեր, կարող եք հանձնել հետեւյալ հասցեով՝ Պուշկինի 38, «ՄԽԻԹԱՐԻՉ» բարեգործական հասարակական կազմակերպություն, հեռ. 53-28-33: